

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾՆԵՐԸ ՂԱՐԱԲԱԳԻ ԲԱՐԲԱՈՈՒՄ

Շ. Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

Դարձված-նախադասությունները (ԴՆ-ները) լեզվի դարձվածային կազմի մեջ մեծ տեղ են գրավում, ունեն ժողովրդախոսակցական լեզվում լայն գործածություն և առանձնապես վառ են արտացոլում նրա կառուցվածքային և զգացական առանձնահատկությունները:

Երբեմն հաղորդակցման պրոցեսում իր ասածը ավելի դիպուկ ու պատկերավոր դարձնելու նպատակով, նայած ստեղծված դրոշմային ու իրավիճակին, խոսողը գործածում է որևէ անձի, առարկայի կամ երևույթի համար տվյալ պահին լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող, հասարակության անդամների կողմից արդեն ընդունված ու արժեքավորված դարձվածային այնպիսի կապակցություններ, որոնք հաղորդակցական արժեք ունեն¹:

Հաղորդակցական արժեք ունեցող դարձվածները պատրաստի վերաբառադրելի միավորներ են, որոնցում գործում են նախադասություններին հատուկ քերականական բոլոր հարաբերությունները՝ խնդրառություն, համաձայնություն, շարադասություն, հորվման ու խոնարհման հարաբերություններ: ԴՆ-ներում առկա են նաև եղանակավորման, ժամանակի, դեմքի, քվի, հաստատման-ժխտման քերականական կարգերը:

ԴՆ-ները ունեն նախադասությունների համար կարևոր ու էական հետևյալ հատկանիշները՝ ստորոգում, հնչերանգ, մտքի ավարտվածություն:

Թեև ԴՆ-ները նույնպես կազմվում են սովորական նախադասությունների համար գոյություն ունեցող նույն քերականական օրենքներով ու սխեմաներով, օժտված են նույն քերականական կարգերով ու օրինաչափություններով, սակայն մի շարք հատկանիշներով տարբերվում են նրանցից: Այդ հատկանիշներն են՝ վերաբառադրելիությունը, կայունությունը (իմաստային, բառային կազմի, գործառության և շարադասության), անմիջարկելիությունը (բացարձակ և հարաբերական), լրիվ հարացույցից գուրկ լինելը և փոխակերպման անհնարինությունը:

Սովորական նախադասությունների համար փոխակերպման փաստը ոչ մի դժվարություն չի ներկայացնում, մինչդեռ նույնը չի կարելի ասել ԴՆ-ների մասին: Ղարաբաղի բարբառը գրական հայերենի նկատմամբ որոշ առանձնահատկություն է ցուցաբերում փոխակերպման առումով: Եթե ժամանակակից գրական հայերենի ԴՆ-ներում փոխակերպումը բացառվում է, ապա բարբառի պարզ ԴՆ-ները կարելի է փոխակերպել բարդի, և հակառա-

¹ Մ. Ո. Խանդյանը գտնում է, որ նախադասություն-դարձվածները, նախադասության կառուցվածք ունենալով հանդերձ, որպես հաղորդակցական միավորներ հանդես չեն գալիս, որովհետև նրանց ձևաքերականական կառուցվածքը չի համապատասխանում արտահայտած մտքի միավորի տրամաբանական-իմաստաբանական կազմությանը: Սա չի՝ նշանակում արդյոք, որ այլաբանական իմաստ ունեցող որոշ նախադասություններ ևս պետք է գուրկ լինեն հաղորդակցական արժեքից: Այսպես, տեքստի մեջ կատարվել է ձևա-ծերություն և ամառ-երիտասարդություն համեմատությունները, որին հաջորդում է «Չմտանն ավելի ես զգում անտան քաղցրությունը» նախադասությունը: Դարձված-նախադասությունների հետ այս նախադասության ընդհանրությունը վերաիմաստավորվածությունն է, իսկ դա նշանակում է, որ նրա ձևաքերականական կառուցվածքը ևս չի համապատասխանում արտահայտած մտքի միավորի տրամաբանական-իմաստաբանական կազմությանը: Այլաբանական իմաստ ունեցող նախադասությունների հաղորդակցական արժեք ունենալու հարցը կասկածի տակ չի առնվում: Հեռևաբար, ձևաքերականական և տրամաբանական-իմաստաբանական կազմությունների անհամապատասխանությունը չի բացառում հաղորդակցական արժեք ունենալու հատկանիշը: (Տե՛ս *Մ. Ս. Խանյան, Основы фразеологии курдского языка, Ереван, 1988*):

կը: Թեև պետք է նշել, որ փոխակերպվող ԴՆ-ների թիվը սահմանափակ է: *Շատ մը՝ դրք-մը՝ դրք ըսելով պերանքա ըրխծըրանայ չի և Զըր սրբիփի վախտ չօնէ պարզ կառուցվածքի ԴՆ-ները կարելի է դարձնել բարդ՝ Վըր շատ մը՝ դրք-մը՝ դրք անիս, պերանքա ըրխծըր-անայ չի և Վախտ չօնէ, բա ըրէր սրբիփ, որոնց գործածությունը ևս, որպես դարձվածներ, ա-վորական է բարբառի համար: Նաև Եզգը վըր վըր ա ընգնում, տըըըկավորնէն շըտանում ըն և Աըչը օխտը յէրը ա գ'իոյնում, օխտըն էլ տանձնու մասի բարդ կառուցվածքի ԴՆ-ները գործածվում են պարզ նախադասությունների ձևով՝ Եզգը վըր ընգած վախտը տըըըկ-վորնէն շըտանում ըն և Աըչին գ'իոյնիս օխտը յէրը տանձնու մասի յա:*

Ինչ վերաբերում է ԴՆ-ների շարադասության կայունությանը, ապա այս դեպքում ևս բարբառի դարձվածային նախադասությունները հանդես են բերում որոշ առանձնահատ-կություն, մեծ թվով ԴՆ-ների շարադասությունը ենթակա է փոփոխության: Ըրած ցելխն մին ըրթօլ ճնրն էլ ա բօլ-Մին ըրթօլ ճնրն էլ ա բօլ ըրած ցելխն: Խալխտն աշկէն կ'էրանը տը՛ս-նում ա, ուրան աշկէն շէրանը տը՛սնում չի և այլն:

Ղարաբաղի բարբառի ԴՆ-ները, ըստ կառուցվածքային ձևավորվածության, կարելի է բաժանել երկու խմբի.

1. Բայական և անվանական դարձվածներից ստորոգման միջոցով ձևավորված ԴՆ-ներ, որոնք կարող են հանդես գալ բայի հարացույցային տարբեր (բայոչ ոչ բոլոր) ձևերով. անվանական դարձվածների ստորոգումն իրականացվում է հանգույցի միջոցով:

2. Ի սկզբանե նախադասությունների կառուցվածքով ձևավորված ԴՆ-ներ, որոնք հնարավոր չէ առանց ստորոգման գործածել: Դրանք հանդես են գալիս հարացույցային սահմանափակ ձևերով, երբեմն նույնիսկ՝ հարացույցային մեկ ձևով: Օրինակ՝ Քամակը տանիս, առաչը գ'իոյն չի: Վէ բուր ա, վէ՛՛ ըրտակէն: Փօբավը չըվան չի պատ կ'լան, Քարը հօփտա՛՛ ճնր կրկաթի: Օխձն ոքխտ մըզիս՝ կըատակ է այլն:

Ըստ հնչեբանագային առանձնահատկությունների, քննարկվող բարբառի ԴՆ-ները կա-րող են լինել պատմողական, հարցական, բացականչական, հրամայական, խառը, ըստ բնույթի՝ դրական և ժխտական:

Գործածության հաճախականությամբ և քանակով բարբառում աչքի են ընկնում պատմողական բնույթի ԴՆ-ները: Դրանցում խոստը պատկերավոր կերպով հաստատում է որևէ փաստ (Քամն բնրա ա փըչնում: Ծոննանվն էլ շօռ կ'ա, հըտաքը ըրվալ չի: Հացն պը-տառն թըթիս, տն օնիս՝ յօր կօնէ):

Երբեմն ԴՆ-ների արտաքին հնչեբանագային ձևավորվածությունը կարող է հակառակ լինել ներքին բովանդակությանը: Այսպես, կան հնչեբանագային բնույթով պատմողական նախադասություններ, որոնց իմաստը ներկայացվում է հարցական նախադասությունների միջոցով՝ Քարը բուլ աօ, հըտան յէչի դարձվածն ունի *ն'զ իմանա, ի'նչ ընթացք կտանա օ-րը* իմաստը: Եվ հակառակը՝ հարցական բնույթի ԴՆ-ների իմաստը կարող է ներկայացվել պատմողական նախադասությամբ. Թաթուն բօտանն ա՞ (անտեր ինչք չէ, տեր ունի): Ղուշ ըմ պըրըլական, ջըմոյնբու յըրա պէց թօղի՞մ (իմ խնամած, հոգ տարած իրը պետք է գնահա-տել ըստ արժանավոյն): Էշը հի'նչ ա գ'իոյնում՝ մօշը հի'նչ ա (ըստ արժանավոյն չեն գնահատում մեկին կամ մի բան): Այս կարգի ԴՆ-ներում հարցումը ճարտասանական բնույթ ունի:

Մյանցից տարբերվում են իրոք հարցում արտահայտող հարցական բնույթի ԴՆ-ները. Վը՛ն իսաչա յա (ո՞րն է պատճառը, հիմքը): Քան է տարվա շօն ըս, իս՛՛ մընէնգ'ըս հաչնում (ինչո՞ր ժամանակին չես նախազգուշացրել): Վը՛ն հանգ'իմ բուրուն ընգնիմ (ո՞րք կորչեմ, ի՞նչ ասեմ, - ասվում է հուսահատության պահերին):

Կան հարցական բնույթի ԴՆ-ներ, որոնցում առկա է նաև հարցի պատասխանը: Կ'յօ-ղը հի'նչ կօզի՛ մըթէն ըրէր: Քօռը հի'նչ կօզի՛ երկու աշկ, երկուսն էլ պըթօգ-պըթօգ:

Մի շարք ԴՆ-ներ կարող են հանդես գալ և՛ հարցական, և՛ պատմողական հնչեբան-գով: Օրինակ, Կամ աղն ա պակաս, կամ՝ մաղը- Աղըտ ա՞ պակաս, բա՞՞ մաղըտ: Իրևէն փը-լավ չընք ուտըլան- Իրևէն փըլավ ը՞նք ուտըլան: Ղուշ ըմ պըրըլան, ջըմոյնբու յըրա պէց թօ-ղի՞մ- Ղուշ չըմ պըրըլան, ջըմոյնբու յըրա պէց թօղի՞մ և այլն:

Գործածության հաճախականությամբ զիջում են հրամայական (պիրանատ անջու-կըս չաթի: Ընջուկէտ պէմբակը տոս կ'լա: Ա կօժ, ք'ըզ աաիմ, ա կօլա, տու սկաց: Յըղէ յըս՝ ծընէ, սըրէ յըս՝ ծընէ) և բացականչական (Կըլխտն մին մագը բիղի: Աստոծ տա: Լուս քը՛էզ

տըսնօղէն) քնույթի ԴՆ-ները:

Խառը քնույթի դարձվածային նախադասություններում գուգոյվում են տարբեր հնչե-
քանգներ. Հո՞ւ վա քլը՛գ ասալ՝ տը՛ղղաւ ծօխ ա, յէ՛ք կաց: Սօղան չըս կէրալ, սըէրաքա խե
մըմըրա՛մ ա: Իրէւնէ քըքում ըս, առում ա՛ հինչ լւով թօռ ա կ'ան: Էշին ըսէցէն հըքքնընքս
ծէն ըն տամ, ասից՝ ճո՞րն ա պակաս, քա՛ փն՞դը:

Հաղորդակցական ԴՆ-ների կառուցվածքային տիպերը

Ղարաբաղի բարբառի հաղորդակցական ԴՄ-ները ունեն յոռոք այն կառուցվացքային
տիպերը, ինչ որ գրական հայերենի ԴՆ-ները: Ի տարբերություն սովորական նախադասու-
թյունների, սրանց ելակետային ձևը առնվազն երկբաղադրիչ կառույցն է: Սովորական նա-
խադասությունների նման դարձվածայինները նույնպես ըստ կառուցվածքի լինում են.

- ա) պարզ և բարդ,
- բ) լրիվ և թերի,
- գ) միակազմ և երկկազմ:

Դարձվածային պարզ նախադասությունները ևս մեկ միտք են արտահայտում, քայց
այդ միտքը ավելի տարադրունակ է. դրանցում վերաբառադրվում է ժողովրդի դարավոր փորձի
ու իմաստության խոր ընդհանրացումը:

Երկկազմ պարզ նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ: Համառոտ
ԴՆ-ները ունեն հետևյալ կառուցվածքային տիպերը.

1. *Ենթակա+բաղադրյալ ստորոգյալ*, վերջինս կազմվում է *գոյական* կամ *ածա-
կան+էական բայ* կադասաբով: Օրինակ, Հսփոտը պը՛ղնդ ա: Անգուճը ծակ ա: Թմբոնն քօս-
տանն ա՞: Աշկը ծակ ա և այլն:
2. *Ենթակա+պարզ ստորոգյալ* Աշկերս պէցվավ: Ասքըխը ծըլլաց: Արնուըս պըրսօղից:
3. *Ենթակա+հարադիր բայով արտահայտված ստորոգյալ* Լին՞գնու կապ ընգավ: Փօքը
ծափա տամ: Կօճէրը հաց ա տըռալ:

Գործածության հաճախականություն և թվային գերակշռություն ունեն պարզ ընդար-
ձակ կառուցվածք ունեցող ԴՆ-ները: Դրանց մի մասում ենթական է հանդես գալիս իր լրա-
ցումներով, մյուս մասում՝ ստորոգյալը իր լրացումներով, քայց ավելի հաճախ հանդիպում են
այնպիսի կառույցներ, որտեղ և՛ ենթական, և՛ ստորոգյալը ունեն լրացումներ:

Ենթական կարող է ունենալ մեկ կամ մի քանի լրացումներ՝ Ապօքը հըքսանէ՛քը մը՛ճնը
ընգավ: Թուլ ընգնօղ քարը մամոտ օնէլ չի: Քաշէն կատարը էրնմ ա: Կըլխէն վը՛րթնը տու-
րնը ա յէկալ:

Ստորոգյային լրացնող բաղադրիչները՝ խնդիրներն ու պարագաները, կարող են հան-
դես գալ և՛ առանձին-առանձին, և՛ միասին՝ Տէնակը վըսկըռէն ա հըսալ: Ծին կըլխէն քացի
յա տըլալ: Քարը գ'նորգ'նաւ վ էր ածէ: Կօշտը տնօգնին ամանը խուրդն նի կրփլըթի: Պըմ-
ընկծախաւն աշկէն չալ շօնը փիս կըքըվա:

Մեծ թիվ են կազմում նաև այնպիսի պարզ ընդարձակ ԴՆ-ները, որոնցում թե՛ ենթա-
կան, թե՛ ստորոգյալը ունեն իրենց լրացում-ծավալիչները՝ Անդար կ'առնը կ'իւլ կօտէ: Կօ-
քած տիմնակէն կօթը վը՛Նսկէ կինի: Կըքավէն ճօտը հավէն տակէն կէնալ չի: Իմ աչառքս նը-
քա յըրա կ'ան ա: Մուկնէն ճօտն էլ չըվալ կըծակէ: Վը՛Նսկէ կացէնն էլ ա ծըմակ քի'նուն:

Քիչ չեն նաև այն ԴՆ-ները, որոնցում լրացում-բաղադրիչներն էլ իրենց լրացումներն
ունեն՝ Ամեն մարթն հալավ ուրան ջանան մօտէ յա: Աչի կտանանը կօթը ծէխէնը կարէլ չի
անէ: Զօստա էժը ըխպիթին ակնան ա ճնը խըմում:

Լրացում-բաղադրիչները ԴՆ-ներում ավելի կարևոր դեր ունեն, քան սովորական նա-
խադասություններում: Եթե վերջիններում լրացումները հնարավոր է փոխարինել ուրիշնե-
րով կամ էլ ընդհանրապես դուրս թողնել նախադասությունից, ապա դարձվածային նախա-
դասություններում դրանք ամբողջ կառույցի անկապտելի բաղադրիչներն են, և շատ հա-
ճախ ԴՆ-ների գոյությունը անհնար է առանց լրացում-բաղադրիչների: Որոշ լրացումների
փոխարինումը բաղադրիչով կարող է չազդել նախադասության դարձվածային իմաստի
վրա: Այսպես, *Զօստա էժը ըխպիթին ակնան ա ճնը խըմում* և *Զօստա էժը չէրէ ակնան ա
ճնը խըմում* դարձվածները հավասարապես գործածական են:

Ինչպես հայտնի է, միակազմ նախադասություններում առկա է գլխավոր անդամներից միայն մեկը՝ ենթական կամ ստորոգյալը՝ իր լրացումներով կամ առանց լրացումների: Ի տարբերություն սովորական միակազմ նախադասությունների, որոնք կարող են մեկ քաղաքիչ ունենալ իրենց կազմում, դարձվածայինների համար երկու քաղաքիչի առկայությունը պարտադիր է: Դարձվածային միակազմ նախադասությունների քացակազմով գլխավոր անդամը չի վերականգնվում, մի հանգամանք, որը թերի և զեղչված անդամներով նախադասություններից նրանց տարբերության հիմնական միջոցն է:

Միակազմ ԴՆ-ները ըստ իրենց կառուցվածքային առանձնահատկությունների և գերադաս անդամի խոսքիմասային պատկանելիության բաժանվում են երկու խմբի՝ *բայական* և *անվանական*:

Քայական ԴՆ-ների գերադաս անդամը արտահայտվում է բայով՝ նրա դիմավոր և անդամ ձևերով, ըստ այդմ էլ կարելի է առանձնացնել երկու ենթախմբեր՝ *անորոշ դիմավոր* (երբ գերադաս անդամը դիմավոր բայ է) և *անդեմ* (երբ գերադաս անդամը անորոշ դերբայ է):

Անորոշ դիմավոր ԴՆ-ները ներկայացնում են դարձվածների այն խումբը, որը հեշտությամբ կարելի է շփոթել առածների հետ: Քանն այն է, որ առածները և ս ունեն նույնպիսի քերականական ձևավորվածություն՝ ենթական քացակայում է, ստորոգյալն արտահայտված է դիմավոր բայով: Դարձվածաբանների կողմից առածների ու դարձվածների տարբերական բազմաթիվ հատկանիշներ են նշվել: Խ. Բաղիկյանը նշում է առածների շարահյուսական հեշտ տարբալուծելիությունը, թույլ վերաինաստավորումը, խրատական, ուսուցողական բնույթը, դարձվածների համար խոսքային միջավայրի առկայությունը (խոսքային միջավայրի քացակայության դեպքում դարձվածային իմաստ ունեցող կապակցությունները կարող են հանդես գալ ուղղակի իմաստներով): «Գ. Լ. Պերնյակովը դարձվածների և առածների տարբերությունը տեսնում է տրամաբանական՝ իմաստային պլանում՝ դարձվածները համարելով հասկացություններ, իսկ առածները՝ իրադրություններ (СИТУАЦИИ), իսկ Ա. Վ. Կունինը դրանց հատկանիշ է համարում այն, որ առածի իմաստը մեկ բառով արտահայտել հնարավոր չէ, մինչդեռ դարձվածը շատ հաճախ կարելի է»³:

Մեր կարծիքով, առածների դարձվածներից տարբերական հատկանիշ պետք է համարել նրանց խրատական, ուսուցողական բնույթը, մի հատկանիշ, որը ներհատուկ չէ Դճ-ներին: Բոլոր մյուս նշված հատկանիշները ընդունում են վերապահումներ⁴: Համեմատենք հետևյալ կառույցները.

Վը՛ններըա յօրդանըա ըզ՛օրնս մը՛կնէ: Կաղլզ՛ էշին քօռ նալրանդ քըթին:

Մըթն տըղը քար չըն քըցի: Էշին վըր քըցեցն, ծիյին նըլեցն:

Էք՛սվա քօշը ուրնուգունճըն քըշում: Խալխն աշկն շէքանը տը՛սնում ա,
ուրնն աշկն կ՛էրննը տը՛սնում չի:

Չէլանը/չքէլանը ճուրը հըսնելը

փօխկէք՛ը յէր մէր/չըն քաշիլ:

Ծիյին յէշում ըն, նալը քըլում:

Աջ կողմի կառույցները՝ դարձվածները, հնարավոր է շարահյուսորեն տարբարուծել և անհնար է արտահայտել մեկ բառով, իսկ ձախ կողմի կառույցները՝ առածները, խիստ վերաինաստավորված են: Միակ հատկանիշը, որը հիմք ընդունելով կարելի է տարբերել աջ և ձախ կողմերի կառույցները, դա առածների խրատական, ուսուցողական բնույթն է:

Անորոշ դիմավոր ԴՆ-ների գերադաս անդամը կարող է արտահայտվել բայի եզակի երրորդ (Իբէտն յէշվում չի: Էքած չի, մըրկած ա: Ցըրքըտ ատ: Քարը թույլ աօ, հը՛տան յէշի) և հոգնակի երրորդ (Ծիյին յէշում ըն, կ՛նրին քըցում: Կ՛առնը կ՛իւլին պահ ըն տըվալ:

³ Տե՛ս Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 83-87:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 86-87:

⁴ Տեղին ենք համարում նշել, որ Խ. Գ. Բաղիկյանը, խոսելով դարձվածների և առածների տարբերական մասին (էջ 83-87), անդրադառնում է առածների խրատական, ուսուցողական բնույթին՝ որպես դարձվածներին ոչ ներհատուկ հատկանիշ: Սակայն գրքի հետագա էջերում, վերաբերյալ անորոշ դիմավոր ԴՆ-ների իմաստաբերականական առանձնահատկությունները, նշում է. «Այսպիսի ԴՆ-ները ավելի շուտ ժողովրդի կողմից ընդունված և ընդհանրացված դառնալուծություններ են, որ մեծ մասամբ խոսքի կամ խրատի իմաստ ունեն» (էջ 316) և քիտում առածների օրինակներ՝ «Բզի գլխին թունցքով չեն խոխի: Կրակի առաջ չախմախիճ չեն տա: Ավազի վրա տուն չեն շինը: Այծը իր ոտքով կկախեն, ուղը իր» (էջ 316):

Չանճան յեր կրպէցէն) դեմքերով: Անորոշ դիմավոր ԳՆ-ները հանդես են գալիս նաև քարոզ նախադասությունների համակարգում: Առանձնանում են նման կիրառությունների հետևյալ դեպքերը.

1. Երբ անորոշ դիմավոր ԳՆ-ները հանդես են գալիս ստորադասական կառույցներում. այս դեպքում անորոշ դիմավոր ԳՆ-ը հանդես է գալիս երկրորդական նախադասության պաշտոնով, որի ստորոգյալը արտահայտվում է բայի եզակի երկրորդ դեմքով, սակայն ունի ընդհանրական բնույթ և վերաբերում է նաև թե՛ առաջին, թե՛ երրորդ դեմքերին, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը արտահայտվում է եզակի երրորդ դեմքով. Ծրնը՝նը ծնուն օգիս, տայ չի: Փըչիս՝ վ էր կընգնէ: Յէղ վ էր ածիս՝ կըքովաքվէ: Իբէս ըս տամ, աստատ էլ ա օգնում: Խիճդէրը հիշքան քիջնրիս, մընէշակ չի տըռնըլան: Ծօվը քիճի՛ կըցըմաքէ:

Ստորադասական այսպիսի նախադասություններում քերականական կապակցման միջոցը շարահարությունն է:

2. Երբ անորոշ դիմավոր ԳՆ-ները հանդես են գալիս թե՛ համադասական, թե՛ սառքա-դասական կառույցներում. այս դեպքում երկու կարգի բարդությունների բաղադրիչ նախադասությունների ստորոգյալները համընկնում են դեմքով և թվով, այսինքն երկու նախադասություններում էլ գործողություն կատարողը նույն անձնավորությունն է՝ Ճիռնմը նըստում ա, ցըմաքումը՝ լըղանում: Վէ ծնն օնէ, վէ յըէղ, քըքվէքու վա շօռ կինմ: Ծիյան վըէր յէկու, ծիճ մընման քըցից: Մտակած էշու վա շօռ կինմ՝ նալէր տնու օնէ: Կըքկըքօցան պըքծավ, ծըլլօցէն տակն ընգավ:

3. Երբ բարդ ստորադասական կառույցի մի մասը երկկազմ նախադասություն է, մյուսը՝ միակազմ անորոշ դիմավոր. այս դեպքում միակազմ անորոշ դիմավոր նախադասությունը կարող է հանդես գալ ինչպես երկրորդական, այնպես էլ գլխավոր նախադասության պաշտոնով՝ Տէննկ թըխիս, աննն չի կաթիլ: Կարէլ չըս դնիզ քիճիս, վըէր հըղէտ ծըռնօռ ա: Պա ծնն չածիս, վըէրըս ծըքտուտ իճի՞: Ծառը վըէր շըքըհաքում ըն, շէշման ա վէր ընգնում:

4. Երբ բարդ համադասական կառույցի մի մասը անորոշ դիմավոր նախադասություն է, որի ստորոգյալը արտահայտվում է բայի եզակի երրորդ դեմքով, իսկ մյուս մասը երկկազմ նախադասություն, որի ենթական հարցահարաբերական դերանուն է՝ Հու վըէր փառիուկ պէրց ա տիճնում, յըքան նըստում ա: Հու վըէր ասում ա՝ մաննըս խըյար ա, աղը յօր ա օնում, վազ տամ: Հու վըէր քումուն հակառակ թըքում ա, ուրնն իքէսավըն ա տամ:

Բարբառում հանդիպում ենք նաև այսպիսի կառույցի. ամբողջ նախադասությունը բարդ համադասական է, որի երկու բաղադրիչներն էլ անորոշ դիմավոր ԳՆ-ներ են, ընդ որում, նախադասություններից մեկի ստորոգյալը արտահայտվում է եզակի երրորդ, մյուսինը՝ եզակի երկրորդ դեմքով՝ Քըմակէս նըստում ա, թա ըտաշա յեր կաց:

Անդէմ ԳՆ-ները ձև ավերվում են անորոշ դերբայ գերադաս անդամով: Նման կարգի նախադասություններում ստորոգումն արտահայտվում է հնչեքանգով, որի շնորհիվ դերբայական կառույցը ստանում է նախադասության արժեք: Անդէմ ԳՆ-ների գործածության ոլորտը հիմնականում երկխոսություններն են: Անդէմ ԳՆ-ները հանդես են գալիս ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասությունների կառուցվածքով՝ Կըքակէն յեր ածէլ: Չէլանը/չըլանը կէտը հըքնէլը փօխկէրը յեր քաշիլ: Պըքտօղ ճիռն մաչի ծնուկուն փըռնէլ: Տանէլ ճնուրը, ծարավ յէտ պիքիլ: Կիռնն նըքըէտ օտէլ, արէռը նըքըէտ օռնալ: Պնուրըք աիճիլ, պէմբակ կիճիլ:

Բարբառում անդէմ ԳՆ-ների գործածությունը հաճախական չէ: Համեմատաբար գործածական են անվանական ԳՆ-ները, որոնց գերադաս անդամ-միջուկը ուղղական հոլովով դրվող գոյականն է կամ իբրև գոյական գործածվող այլ խոսքի մաս, որի միջոցով խոսողը փոխաբերական իմաստով դատողություն է անում որևէ անձի, առարկայի կամ երևույթի վերաբերյալ: Դարձվածային անվանական նախադասությունների շարքին կարելի է դասել նաև այնպիսի միակազմ անդէմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը բաղադրյալ ստորոգյալն է՝ Էշը մատաղ անէլը հիշտ ա: Թննուն քօտանն ա: Էն ա յուզվիս պըսկէն: Վէ քուր ա, վէ քըտակէն:

Անդէմ ԳՆ-ների նման սքանք էլ հեշտությամբ կարելի է փոխաբիցել երկկազմ, հատկապես թերի նախադասությամբ: Այստեղ պետք է նշել այն կարևոր հանգամանքը, որ նման դարձվածային կապակցությունների նախադասություն դառնալու հանգամանքը պայմանավորված է խոսքային իրավիճակով, դրանց՝ հարողակցական միավոր դառնալու պոտենցիալ արժեքով:

Թերի նախադասությունները գործածվում են խոսքը ավելորդ ծանրաբեռնվածություն-
նից ու ձգձգվածությունից ազատելու, ասելիքը կարճելու, ասույթին սեղմություն ու դիպու-
կություն հարդարելու նպատակով: Այսպիսի նախադասությունները ավելի շատ ոճական
լիցք են պարունակում և մեծ մասամբ հանդես են գալիս որպես խոսքի նախադաս մասի սեղմ
ու պատկերավոր պատասխան: Թերի նախադասությունները, գրեթե առանց բացառու-
թյան, իրավիճակային բնույթ են կրում և հիմնականում հանդես են գալիս երկխոսություննե-
րում: Օրինակ.

- Ասումքն, ծեր հըրբվանէն տղան մին կըթօյսը քաշ քցանձ մարք ա:
- Ըլբզանումը պըպըզած, ամմա դէ տինն էլ հնոր ա՞ հնջնսք:

Բարդ կառուցվածք ունեցող ղարձվածային նախադասություններ

Ղարաբաղի բարբառում գզալի բիվ են կազմում բարդ կառուցվածք ունեցող ԳՆ-ները,
քեև, համեմատած պարզ նախադասությունների հետ, չունեն իմաստային, կառուցվածքա-
յին և գործառական նույնպիսի բազմազանություն: Պատճառն այն է, որ ղարձվածին հա-
տուկ է կաբճությունն ու սեղմությունը, դա ղարձվածի հիմնական հատկանիշներից է:

Բարբառում կան և՛ համադասական, և՛ ստորադասական բնույթի բարդ նախադասու-
թյուններ, որոնց բաղադրիչ նախադասությունները ավելի սերտորեն են կապվում իրար հետ,
քան սովորական բարդ նախադասությունների բաղադրիչները: Բայց ԳՆ-ների բաղադրիչ-
ների կապը այն աստիճան սեղմ է, որ անհնար է դառնում նրանց առանձին գործածություն-
ը, և բաղադրիչները գրկվում են ինքնուրույնությունից: Այդ երևույթը նկատելի է ոչ միայն
ստորադասական բնույթի նախադասություններում, որի բաղադրիչների կապը սովորաբար
ավելի կայուն է, այլև համադասական նախադասություններում: Այսպես, *Յըւ գանձ ըմ ա-
սում, տա՛ տանձ: Կ՛նոյին անումն ա յեր իյնդ, քայց աղվէն ա աշխարքըս օտում: Անէ Հնի-
րին, ծաղկէ՝ Փնրին: Շնէրը քուրլ կացէն, նո՛գօղէն պէնը օճգան ընգավ* համադասական
նախադասությունների բաղադրիչներից յուրաքանչյուրը խստորեն պայմանավորված է
մյուսով, և առանց մեկի մյուսն անգործածելի է:

Բարբառում գործածվող ստորադասական ԳՆ-ների բաղադրիչների միջև գործում են
տարբեր բնույթի հարաբերություններ. սրտածառահետև անքային (Օխձին կըթօյսը վըրք ցա-
վում ա, պիրում ա տինում հըրքցէն մաչին), պայմանաժամանակային (Տանձը վըրք հըսավ,
ծառէն կէննա՛ չի: Յեզը վըրք վեր ա ընգնում, տընըկըվորքէն շըսանում ըն: Բիժի վըրք տու
յէկեր, քուրուն ըստել չա՞ք), չափի (Քաշը հիշքան լըղանա, յըթօնձ՛ չի տը՛ռնալ: Օղտը հիշ-
քան ստակած ինի, էխա կաշին մին իշնպէտն ա), պայմանահետևանքային (Մինչէվ խօ-
խան լնց չինի, մարը ծը՛ծ չի տալ: Լնոզում չինի, քաշ-քըչէղակ յըրա կըտան-տանին):

Ստորադասական ԳՆ-ների երկբարդական նախադասությունը ավելի հաճախ ունի
նախադաս գործածություն (դա երևում է բերված օրինակներից):

Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները կապակցվում են շողկապով
և շարահարությամբ՝ էշը վըրք Յէրտասղէն էլ քիինի, էխա անումը յորնն յըրա յա: Մին տօնը
վըրք կապվէ, մինը կըպէնվա: Մըրքէն գ՛նորում ըն, թս սաղէրը հարվա ուտելիս ըն իննում: Լօխ
պըքծավ, մնաց հօրք/սպօրը գ՛օռը: Վըխճարէն սնորուն յեա տը՛ռավ, կաղէգ՛ըն առաչ ընգավ:

Եթե գրական հայերենում բարդ ԳՆ-ները գրեթե միայն երկբարդադրիչ են, և բազմա-
բարդությունը բնութագրական չէ ղարձվածի համար, ապա Ղարաբաղի բարբառում կան
բազմաբարդադրիչ ԳՆ-ներ, որոնց բաղադրիչների միջև գործում են տարբեր բնույթի հարա-
բերություններ՝ Հարուստը քնզն չօր կէցավ, քտցէն՝ շընքհավոր ինի, քլնսիքը կէցավ, ք-
սէցէն՝ հիշտղղա յա՞: Հարուստը օխձը կէրնավ, քտցէն՝ ճար ա, քլնսիքը կէրնավ, քտցէն
տնոզն ա: Էշն անէ, էշն օտէ, պա իշնստարը հի՞նջ կօտէ: Թա փալանըս ինձորնյա, կըթօյսըս
փօխիս, փօխիս փուչ, հնմին հաշէվն ա: Ժըրատն քտցէն՝ տօնը պէց ըրա, կըքըհար ըրավ:
Կ՛օղէն քտցէն՝ պըքըքհանավը յէշի, ծըկըծնկի ըրավ: Խօխան լնց իյնավ, թա՛ փայըս խըրէ-
գա, քաշը յըրա տըվավ, տարավ: Ասում ըմ՝ ասում էր՝ թա էշը քած ա, ասում ա//ըս՝ քօտակն
էլ ա քած:

Ինչպես տեսնում ենք, քարքառում հանդիպում ենք մինչև վեց բաղադրիչ-նախադասություն ունեցող դարձվածային նախադասությունների: Այսպիսով, Վարարաղի քարքառի դարձվածային նախադասությունները ներկայացնում են գրական հայերենի հաղորդակցական արժեք ունեցող դարձվածային միավորների ողջ բազմազանությունը՝ հանդես բերելով մի շարք առանձնահատկություններ, որոնք արտահայտվում են հատկապես բարդ կառուցվածք ունեցող դարձվածային նախադասություններում:

Ս. Մ. МИНАСЯН- Коммуникативные обороты в карабахском диалекте.- В статье автор впервые исследует предложения, имеющие коммуникативное значение, обстоятельно представляет типы предложений-оборотов, средства грамматической связи в таких предложениях. Коммуникативные обороты карабахского диалекта сопоставляются с литературным армянским.